

60. ԳՐԻԳՈՐՈՒԼԻՇ

331.6

գ - 95

ՀԱՅ. ԱՇԽԱՏԱՆՔ

ՑԵՎ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

26 MAR 2013

331.G

9-95

ՄՐ

ԹԵ. ԳՐԱԳՈՐՎԵԼ

ՀԱՅ, ԱՇԽԱՏԱՆՔ
ՅԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

1008
35.068

Քարգ. ԶԱՎԱԽԵՑՔ

23474

15 JAN 2010

«Կոպիտայի ու վարձու աշխատամեմի և ու կառուցյունների վրա հիմնված բոլոր հարցերի միակ լուծումը զանգում և պրոխարական հեղափոխության մեջ»:
(Ֆ. ԵՆԳԵԼԻՍ Վ.Լ հատ. 111 յնք.)

Պատկրատի տպարտ
Քաղաքացի 6960 (Բ)
Պատվեր 5630
Հրատ. 1899
Տիբաճ 3000

Կառլիստալիստական բոլոր յերկրներում, տեխնիկական ամենադադացած Հ. Ա. Միացյալ Նահանգներից սկսած մինչև կիսալյարենի գաղութները, գործադուրկների սովորուկ մասնաները դուրս են գալիս փողոց ու ամեն լեզուներով, վորոնցով միայն խոսում են այդ յերկրների աշխատավորները, բարձրակոչ պահանջում են՝ «Հաց և աշխատանք»: Գործադուրկների այդ պահանջներն որ-առվուր կրկնվում են ավելի հաճախ ու ապառնալից: Ամեն որ գործադուրկների թիվն ավելանում է տասնյակ հազարներով: Սովորաբերի, «ավելորդ ապառների» այդ բանակն որ-առվուր աճում է:

Փոռղ կապիտալիզմը ներկայիս առքում է խորը տնտեսական ճղնաժամ, վոր համակել ե բոլոր կապիտալիստական յերկրներն ու արդյունաբերության բոլոր ճյուղերն անխտիր և որ-առվուր ավելի լայն ծավալ ե ստանում ու խորանում և: Իրեն ճղնաժամի հետեւանք՝ գործադրկությունը—կապիտալիզմի այդ մշտական ուղղեկիցը, —արդեն անցել ե իր սովորական չափերը, ինչպես և այն չափերը, վորոնց հասել եր նա կապիտալիստական ռացիսնալիզմիայի հետեւանքով:

Գործադրկությունը դարձել ե նաև բուրժուական դարւամենաների բնաբանթյան հիմնական չմեկներից

ՄԵԼԻ: Խեքը զա վիտյամ և իր ծառին Գործադուրիների միլիոնական մասսաները, վոր դուրս են դալիս կապիտալիստական խոչոր բաղադրների վողոցները, աղաղակում են իրենց կտրիքի մասին ու պահանջում են իրենց իրավունքն աշխատանքի վերաբերժամբ: Մասսաների մարտահան արամազդրությունն արտահայտվում է նրանով, վոր նրանք պաշտպանում են իրենց իրավունքը վողոցում, վոր նրանք ցույցի յին դուրս դաւալս, չնայելով վոստիկանական տերրորին:

Վերջին տարին ցույց տվեց բանվորական մասսաներին, վոր այսորվան աշխատողը, վաղը գործազուրկ և լինելու, վոր գործազրկությունն արդեն ձեռնամուխ է յեղել գրեթե բոլոր բանվորական ընտանիքներին ու հանդիսանում է իրեն մի հարց, վոր կենդանի կերպով շոշափում և ամբողջ բանվոր դասակարգին: Ազավելով գործազուրկների հսկայական բանակի առկայությումը, կապիտալիստները վնում են ամբողջ դասակարգի դրությունն ավելի ու ավելի վատթարացնելու ուղղով՝ իջնելով աշխատավարձը, յերկարացնելով բանվորական որը, բարձրացնելով հարկերը, ուժեղացնելով բանվոր դասակարգի չահաղործումը: Բանվորները գործնականապես համապատասխան ուժում են, վոր բոլոր ուժորմատներն ու սոցիալ-ֆաշիստներն ակտիվ կերպով աշակցում են կապիտալիստներին ամելի ու ամելի մեծ ողուաներ մգելու, ամեն կերպ վատթարացնելու բանվոր դասակարգի դրությունը: Պրոլետարական լայն մասսաներն իրենց աշխավ տեսնում են, վոր գործազրկությունն աւագանական սիստեմ սիստեմին, մինչդեռ գոյություն ունի արտօնագրության մի ուրիշ, սոցիալիստական սիստեմ, վորի չնորդիվ գործազրկությունը միանդամայն վերաբերել է

և նրա պայմաններում ընդհակառակը կտրիք և պաշաճ վում նոր, լրացուցիչ բանութիւն: Բանվորական լայն մասսաներն սկսում են ավելի քան յերեսե շոշափելի կերպով զգալ կոմկուսակցության ու հեղափոխական արձիությունների զեկալարության տակ համախմբվելու անհրաժեշտությունը, քանի վոր բանվոր դասակարգը միմիայն կաղմակերպված ու հեղափոխական դասակարգային կաղմակերպությունների զեկալարությամբ է, վոր կարող է կովել իր դասակարգային թշնամու դեմ ու հաղթել նրան:

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՄՇՏԱԿԱՆ ՈՒՂԵԿԻՑՆ Ե

Արտադրության կապիտալիստական յեղանակ ու նեցող յերկրներում գործազրկությունը յեղել է, կուռ միշտ ել կլինի: Գործազրկությունը կապիտալիզմի մշտական ուղեկիցն է: «Կապիտալիստական արտադրության համար բնավ բավական չե աղատ բանվորական ուժի այն քանակը, վոր մատակարարում և բնակչության բնական աճը: Իր աղատ դարդացման համար նա կարիք և զգում արդյունաբերության պահեստի բանակի, անկախ այդ բնական սահմաններից»: Այդ պահեստի բանակը, վորի մասին ասում է կարլ Մարքսը, կազմում են հենց այն գործազրկությունը, վոր գոյություն ունեն կապիտալիստական յերկրներում: Այդ խրոնիկական գործազրկությունը հետպատճերացման կապիտալիզմի համար գարձաւալ առանձնապես նկատելի մի յերեւյթ:

Հետպատճերացման կապիտալիզմի յերկրորդ ըբրձանական գործազրկությանը մը ծանք ցեռ եք բանվոր

գառակարդի համար, սակայն Հետպատճերազման կապիտալիզմի յերրորդ շրջանի սկզբից դործադրկությունը դառնում է բանվոր դասակարգի կարեւորագույն խնդիրներից մեկը։ Կապիտալիստական ռաժի՛ոնալացման կիրառումը, արդյունաբերության վերասարքավորումը, արտադրության ավելի կատարելագործված յիշանակների մտցնելը, աշխատանքի լարվածության (ինտենսիվության) ուժեղացումն առաջացնում էն առվելուկ բանվորական ուժի արտավանումն արտադրությունից։ Գործադուրիների մշտական բանակին վերջին արքիներս ավելացավ գործազրկությունը մի ահազին նոր բանակ, վոր կապիտալիստական ռաժի՛ոնալացման գոհն և հանդիսանում։ Այսպիսով կապիտալիստական ռաժի՛ոնալացման ժամանակ ավելացած դործադրութիւնների պահեստի բանակը դարձավ մի «ավելորդ» բանակ, վորն այլևս չեր կլանվում արտադրության մեջ, հույս անդամ չունենալով վերադառնալ այնտեղ նույնիսկ արդյունաբերության վերելքի դեպքում։

Կապիտալիստական ռաժի՛ոնալացման հետաղա կիրառումն առաջացնում է ավելի ու ավելի մեծ չափերով մարդու արտավանումն արտադրությունից ու նրա փոխարինումը մեքենաներով, կամ վորակյալ բանվորական ուժի փոխարինումն ավելի անվորակ կամ ավելի թույլ ու միաժամանակ ավելի եժան կահացի ու անչափահանների աշխատանքով։

Նոր ծավալվող արտադրությունները կարող եյին կանել այդ ավելորդ բանակի միայն մի աննշան ժամանականել արտադրությունը կապիտալիստական կարեւորագույն խնդիրներին, պարզաբանելով այն առաջարկը արտադրությունը մեջ մտնելու մասին։ Այս առաջարկը կապիտալիստական ռաժի՛ոնալացման առաջնակարգ նյութ է առաջարկը արտադրությունը մեջ մտնելու մասին։

Համաշխարհային տնտեսական կրիզիսի տարածումը գործազրկությունն առաջանական կրիզիսի տարածման հետ կապիտալիստական յերկրներում, գործազրկությունն ակսեց ավելի ու ավելի աճել։ Այս գործազրկությունն արդեն հանդիսանում էր վո'չ միայն հետեւանք կապիտալիստական ռաժի՛ոնալացման, վորը կապիտալիստներն ուժեղ կերպով շարունակում եյին անցկացնել և տնտեսական կրիզիսի ժամանակ, այլ ավելի ու ավելի զառնում եր համաշխարհային տնտեսական կրիզիսի հետեւանք։

Քանի համաշխարհային տնտեսական կրիզիսը տարածվում է կապիտալիստական հիմնական յերկրներում, ինչպես և գաղղութներում ու կիսագաղղութներում, նրա հետ միասին աճում է և գործազրկությունը, ըստ վորում ավելանում է և նրա զարգացման տեմպը։

Ժամանակակից տնտեսական կրիզիսն առաջ է յեկել ապրանքների գերարտադրության հետեւանքով։ Կապիտալիստների ցանկությունը՝ վաճառել իրենց ապրանքները, հարկադրում և նրանց եժանացնել այդ ապրանքների գները, իրենց մրցակիցների հետ պայքարելու համար։

Այս կամ այն յերկրում ազգեցություն ձեռք բերելու համար մզվող պայքարը համաշխարհային կրիզիսի ժամանակ, ստիպում է կապիտալիստներին իրենց ապրանքն արտահանել ու վաճառել չնչին գներով։ Սրա հետ միաժամանակ, վորպեսզի ծածկեն եժան եքսպրուաֆ շնորհիվ իրենց կրած վնասները, կապիտալիստները բարձրացնում են ապրանքների գները ներքին շուկանում։ Գործածության անհրաժեշտ առաջնակարգ նյութ

թերի թանգացումն ամենից առաջ ապկում և բանվորաների գրպանի վրա, վորոնք պիտի վճարեն այժմ այդ բարձր գները սնուղամթերքների համար: Այդ հանգամանքը վատացնում և բանվոր դասակարգի գրությունն ու բնականորեն առաջացնում բանվորների գծուհաւաքությունը: Գայքարը շուկայի ու ազդեցության շրջանների համար կապիտալիստներին հարկադրում և աճեցնել պատերազմական զինավորումը, ուժեղացնում և պատերազմի վտանգն ընդհանրապես, իսկ մասնավորապես ԽՍՀ Միության գեմ, —մի շուկա, վորը կարգավորում և արտաքին առևտրի մեջավաճառով:

Համաշխարհային անտեսական կրիզիսն ամելի ևս սրվում և չնորդիվ այն հանդամանքի, վոր նրան զուգաղեղում և համաշխարհային ադրարային ճղնաժամը, այսինքն գյուղատնտեսության ճղնաժամը, վոր առաջացել և նորինպես ապրանքների, առանձնապես հացի գերարտադրման հետևանքով: Այդ ադրարային կրիզիսն ամենից առաջ անդրադառնում և գյուղացիական տնտեսության վրա, վորը չի կարողանում դիմանալ կապիտալիստական խոշոր ձեռնարկությունների մըրժմանը, ձեռնարկություններ, վոր զինված են մի շարք նոր գյուղատնտեսական տեխնիկական մեքենաներով: Այդ գյուղացիությունը, և առաջին հերթին նրա ամենաչքավոր մասը, վոր հողամշակություն և անում մեծ ժամանք վարձկալությամբ, քայլքայլում և գյուղատնտեսության գերարտադրության հետևանքով: Այսպիսով համաշխարհային ադրարային կրիզիսը միլիոնավոր գյուղացիների, իրենց ընտանիքներով, մատնում և աղքատության ու սովի: Շատ գյուղացիներ, գյուղքողներով, պրոլետարանում են, զնում են քաջար աշ-

խառանը վորոնելու, դակայի այստեղ նրանք հանդիպում են հարյուր հազարավոր ու միլիոնավոր գործառ գուրկի պրոլետարների:

Ներկա ճղնաժամը հանդիսանում և մինչև այժմ դեռ չտեսնված համաշխարհային տնտեսական ճղնաժամ: Բացի իր համատարածությունից, ընդարձակությունից ու խորությունից, այս կրիզիսը տարբերվում և նախկին բոլոր կրիզիսներից նաև նրանով, վոր նա տեղի ունի կապիտալիստական սխտեմի տնտեսության ընդհանուր կրիզիսի պայմաններում, այդ առանձնապես պարզ ակներեւ և գառնում, յերբ համադրում ենք այն մի այլ տնտեսական ու պետական՝ սոցիալիստական սխտեմի հետ, վորը գոյություն ունի ԽՍՀ Միության մեջ:

ԽՍՀՄ-ում չկա տնտեսական ճղնաժամ, —ի՞ո՞չ արդյունաբերական, վո՞չ ել ագրարային: ԽՍՀՄ-ում չկա արտադրության անարխիական յեղանակ, վոր գոյություն ունի տնտեսության կապիտալիստական սխտեմում: ԽՍՀՄ-ում չկա գերարտադրություն, ԽՍՀՄ-ում չկա գործիքների ու արտադրության միջոցների մասնավոր սեփականություն: ԽՍՀՄ-ում չկա հողի մասնավոր սեփականություն: ԽՍՀՄ-ում չկա մըրցություն ու պայքար շուկայի համար: ԽՍՀՄ-ում գործիքներն ու արտադրության միջոցները գտնվում են պրոլետարական պետության ձեռներ: Ամբողջ տնտեսությունը առաջլում և պլանի հիման վրա: ԽՍՀՄ-ում վո՞չ միայն չեն փակվում գոյություն ունեցող գործարաններն ու ֆաբրիկաներն ու գուրս նետվում բանվորները, այլ ԽՍՀՄ-ն ինդուստրացվում և կառուցում են հոկայական կոմբինատներ,

գործարաններ, ֆարբիկաններ, ելեկտրոկայաններ և այլն, ուր հավաքում են նոր ու նոր բանվորներ: Ազգային ժողովը պատճենաբառություններ ու կոլտնտեսություններ: Զքավոր ու միջակ գյուղացիությունը կամավոր կերպով մտնում է կոլտնտեսությունները, ուր անհամեմատ բարելավվում է նրանց դրությունը: ԽՍՀՄ-ում վերացրել են գործադրկությունը, ԽՍՀՄ-ում որավուր բարելավվում է բանվոր դասակարգի դրությունը: Այդ յերկու սիստեմների միջանի հիմնական մոմենտների թուրցիկ համարությունն անդամ ցույց է տալիս բանվոր դասակարգին ծնվող սոցիալիստականի առավելությունները մեռնող կապիտալիստականից:

Բուրժուական ու սոցիալ-ֆաշիստական թերթերն ամեն կերպ նշաններ են վորոնում հայտարարելու, թե տնտեսական կրիդիս արդեն վերջանում է, թե նորից կակավեն կապիտալիստական դրախտի բարորությունները: Առանձնապես մեծ ջանքով նրանք զբաղվում ենին այդ խնդրով 1931 թվի նախորյակին, յերբ հանում ենին անցած տարվա հանրագումարներն ու նախանշում, թե ի՞նչ կարելի յե սպասել 1931 թվականից: Սակայն երենց համար միայնական շատ քիչ բան գտան նրանք այդ հանրագումարների մեջ: Նրանք գրեթե բոլորը հարկադրված ենին խոստովաննել տնտեսական խորը կրիդիսի առկայությունը, վորից ելապես յելք չենին ճարում նրանք: Իհարկե, այդ բոլոր դատողությունները համեմվում ենին հույսերով ու հավատով, թե տնտեսական կրիդիսը կվերջանա ու նորից կտա «բարությունը»:

Առնդոնի «Թայմզը» գրում եր:

«Դժվար թե ճարպի մեկը, վոր բավականությամբ դիտի 1930 թվականը: Ամենքն ընդունել են արդեն, վոր այդ տարին դեպքեսիայի մի շրջան եր, վոր բոնել եր ամբողջ աշխարհը և ետք չի տալիս վո՞չ մի քերկության»:

Գերմանական «Ֆրանկֆուրտի Յայտունգը» գրում եր.

«1930 թվականի հանրագումարի մեջ յերեղան են դալիս բաղմաթիվ հարցական նշաններ և իբրև յեզրակացություն մի մեծ հարցական նշան, թե հարավո՞ր ե արդյոք, վոր յերբեն, լավ թե վատ, դարձյալ գոյություն ունենա խաղաղությունը»:

«Բերլինի բերգենցայտունգը»:

«Աղքատությունը հսկայական չափեր ե ընդունել, գերմանական ժողովրդին հոշոտում ե ատելությունը, կամունիզմը բերյինում ցույուի յե գուրս բերում իր կողմնակիցներին: Միթե դրանից չի յերեսում, վոր մեղ մոտ խաղաղության համար այլևս տեղ չի մնացել»:

Անդլիական «Դեյլի Մեյլ»-ը մատնանշում է, վոր

«Կրիդիսից յելք կարելի յե գտնել միմիայն ստեղծելով կայուն իշխանություն մի ուժեղ մարդու զվարակությամբ»:

Այս լրագրի բնորոշման մեջ պարզ հնչում են Փաշիստական տենդենցիներ:

Նույնչափ հոգեսես ե հնչում անդլիական հայտնի Ակոնոմիստ (տնտեսագետ) Կեյնսի խոստովանությունը Տվիրտշաֆտգինոտ» թերթում, վորտեղ նա գրում ե.

«Մենք ապրում ենք նորագույն պատմության տնտեսական գերազույն կատաստրոֆի նշանների տակ»:

Միաժամանակ նշում & նա, վոր կրիզիսն ընդունել
եւ արդեն լայն չափեր, վորպիսին չեր սպասում վո՛չ
վո՞ք բուրժուական լազերից:

Գերմանական հայտնի ենթամիտությունների Ս-
միլ Լեներերը իր հրապարակած «Յելք կրիզիս» գե-
կուցման մեջ հայտնում են, վոր կապիտալիզմը սնան-
կացել ե, և միակ յելքը կրիզիսից հանդիսանում ե պլա-
նային տնտեսությունը:

Բուրժուական լրագրերի ու գիտնականների կրի-
զիսից յելք գտնելու համառ վորոնումները վո՛չ մի հե-
տևանքի չհանգան, համաշխարհային կրիզիսից վո՛չ
մի յելք չդուռնան, բացի արշավից դարձյալ բանվոր դա-
սակարգի դրության վրա:

35 ՄԻԼԻՈՆ

Համաշխարհային տնտեսական կրիզիսին զուգակ-
շում ե գործադրկության կատաստրոֆիկ աճը բոլոր
կապիտալիստական յերկրներում, դաղութներում ու
կիսագաղութներում, ընդվորում չիտ վո՛չ մի հնարա-
վորություն ճիշտ կերպով ասելու, թէ ի՞նչ չափերի
յէ հասնում իսկապես այդ գործադրկությունը:

Յերկրներից մեծ մասում յեթե կա յել գործա-
դուրկների վիճակազրություն, չափաղանց թերի ու ան-
ձիշտ ե այն և միշտ նկատի յե տոնված նվազեցնել
գործադրուրկների թիվը: Աշխատանքի բորսաները կամ
աշխատանքի բաժանմունքները սովորաբար ցուցակա-
գրում են ապահովազրված գործադրուրկներին միայն,
վորոնք նպաստ են ստանում: Այդպիսի վիճակագրու-
թյունը հարկավ չի ընդդրկում բոլոր գործադրուրկնե-
րին: Միքանչ տեղերում ել արհմիություններն են ցույ-

ցակազրում գործադրուրկներին, բայց միայն իրենց արհա-
միության անդամներին, իսկ շատ յերկրներում ել, ինչո-
պես որինակ, չ. Ա. Միացյալ Նահանգներում, գործա-
դուրկների ցուցակադրում բոլորովին չկա: Մակայն,
մինչև իսկ յեղած այդ պաշտոնական տվյալների հա-
մաձայն (գերմանական կոնյուկտուրային ինստիտու-
տի), վորոնք միշտ նվազեցնում են գործադրուրկների
իրական թիվը, այնուամենայնիվ նրանց քանակը 1930
թվի յերրորդ կվարտավի վերջերին հաշվվում եր 15-18
միլիոն մարդ: Այդ տվյալներն, իհարկե, չեն արտացո-
լում համաշխարհային ամբողջ գործադրկությունը,
ըստ վորում հիմնավորված են սուսկ պաշտոնական տե-
ղեկանքների վրա և գործադրուրկների ահազին միլիոնա-
վոր մասսաներ, վորոնք չեն ապահովագրված, չեն կազ-
մակերացված, վորոնք գործադրկության համար չեն
ստանում նպաստ, կամ արդեն կորցրել են նպաստ ստա-
նալու իրավունքները, չեն մտնում այդ թվի մեջ:

Կատարելագիս գործադրուրկների թիվը 50 յերկր-
ներում 1931 թվի հունվարին պետք ե հաշվել 35 միլիոն
մարդ:

Հստ յերկրների այդ թիվը բաժանվում ե հետեւյալ
կերպով.

Հ. Ա. Միացյալ Նահանգներում	10 000.000*)
Գերմանիայում	5.300.000
Անգլիայում	3 500. 00
Լատինակ. Ամերիկայում (19 յերկր)	4.000.000
Իտալիայում	1.800.000
Յապոնիայում	2.000.000
Կենաչանական	1.100.000
Ավստրիայում	550.000

*) 1931 թ. մայոսի ավագներանը՝ 18.000.000.

Վիճութիւնում	600.000
Չեխո. Սլովակիայում	750.000
Թումինիայում	400.000
Յուգոսլավիայում	350.000
Բուլղարիայում	200.000
Հանաստանում	150.000
Բելգիայում	150.000
Իսպանիայում	500.000
Փորթուգալիայում	3.000
Շիցիայում	300.000
Դանիայում	150.000
Հունաստանում	100.000
Նորվեգիայում	100.000
Հուանդիայում	100.000
Ֆրանդիայում	100.000
Լատվիայում	40.000
Եստոնիայում	27000
Լիտվայում	18.000
Ֆրանսիայում	500.000
Ավստրիայում	500.000
Ն.-Ի. Զելանդիայում	60.000
Կանադայում	400.000
Հնդկա-Չինում	100.000
Կորեյայում	100.000
Մեքսիկայում	800.000
<hr/>	
Ընդամենը	34.845.000

Մրա մեջ չեն մտնում մնացած 22 յերկրները, ինչպես Հնդկաստանը, Չինաստանը, ինդոնեզիան ու մյուս գաղութները, ուր գործադուրկ բանվորներն ու գյուղացիներն ամբողջ ընտանիքներով թափառում են յերկրի մի մասից մյուսը, վորտեղ նրանց հաշվելն անհնարին է: Եթե 50 միլիոն հաշվենք համաշխարհային գործադուրկների ընդհանուր թիվը, չափաղանցված չի լինի բնալ: Դա նշանակում է, վոր ընտանիքների հետ

Հաշված ամբողջ աշխարհում 150 Միլիոն մարդ տակ յին մատնված:

Եկթե մենք գործադուրկների թիվը հունվարին վերցանում ենք 35 միլիոն մարդ, ապա պետք է հիշել, վոր համաշխարհային կրիզիսի հետագա աճման հետ այդ թիվն որ-ավուր ավելանում է... Ամեն մի որը հաղարավոր նոր գործադուրկներ ե դուրս նետում փողոց: «Ավելորդ բերանների այդ ահազին սովորակ բանակը հույս ել չունի մոտ ժամանակներում գործ գտնելու:

Պաշտոնական տվյալների համաձայն Անգլիայում գործադուրկներ կային.

1929 թ հոկտեմբերին	1.254	հազար
1930 ա հունվարին	1.520	"
» ապրիլին	1.752	"
» հուլիսին	2.072	"
» հոկտեմբերին	2.246	" *

Մենք տեսնում ենք, վոր 1929 թվի սեպտեմբերից մինչև գեկտեմբեր (ներառյալ) գործադուրկների թիվն ավելացել է 141000 մարդով, 1930 թվի հունվարից մինչև մարտ— 266000 մարդով, նույն թվի ապրիլց մինչև ոգոստոս արդեն—354 հազարով և ոգոստոսից մինչև հոկտեմբեր, այսինքն յերկու ամսվա մեջ միայն գործադրկությունն ավելացել է 140 հազար մարդով: Գործադրկության աճման թափն արագ կերպով բարձրանում է:

Ավստրիայում 1930 թվի դեկտեմբեր ամսվա ընթացքում գործադուրկների թիվն ամեն որ ավելանում էր 3000 մարդով: Նույն յերեկույթը նկատելի յե և կապիտալիստական մյուս յերկրներում:

Թորթազուրիների այլքիսի արտգ աճն արտղ ներ-
պով ել լցնում և բոլոր յերկրների դորժապուրիների
բաղմանդամ բանակը և աշխատավոր բնակչության
լայն խավերին և պլիսավորապես նրա պլրուետարական
մասին մատնում վակատար սովոր ու աղքատության:

Բացի այդ լիակատար գործազուրկներից, կա և
որ-ավուր կատաղի թափով աճող մասնակի դորժա-
պուրիների ահաղին բանակ: Այդ մասնակի դորժա-
պուրիների քանակը մոտավոր կերպով անդամ դժվար և
վորոշելլ:

Մասնակի դորժաղրկությունը ներկայիս Հանողիսա-
նում և համատարած յերելույթ ինչպես Գերմանիայի,
Անգլիայի, Ֆրանսիայի, այնպես ել Ամերիկայի, Լատի-
նական Ամերիկայի, Հնդկա-Զինի, Չեխոսլովակիայի,
Բալկանյան յերկրների համար և այլն: Կապիտալիստ-
ների մեթոդն ամեն տեղ նույն է: Փոխանակ ձեռնար-
կությունը բոլորովին փակելու, նրանք աշխատում են
վերածել այն կրճատված բանվորական ժամերով աշ-
խատող ձեռնարկության, ամեն ճիշտ թափելով այդ
կրճատ ժամանակամիջոցով ել նույն ողուտներն սուսա-
նալ, ինչ ստանում ելին առաջ: Տարակույս չկա, վոր
նը, կապիտալիստները վատթարացնում են բանվորի
դրությունը, հնարավորություն ունենալով հարկադրե-
աշխատել հավելյալ բանվորական ժամեր, միաժամա-
այնքան, վորքան անհրաժեշտ և նրան իր դոյցությունը

Այս առթիվ կարև Մարքսը գրել է:

«Կրիպիսները, վորոնց ժամանակ արտադրու-
թյունն ընդհատում է և աշխատանքը տառվում
է «վոչ լրիվ ժամերով», այլ շարաթվա մեջ մի-
քանի որ միայն, իհարկե, վոչնչով շեն փոխում
բանվորական որը յերկարացնելու ձգտումը:
Վորքան շատ կրճատվեն դորժերը, այնքան շատ
պիտի լինի յուրաքանչյուր գործից ստացվող
արդյունքը: Վորքան կարծ ժամանակով կա ո-
դանա շարունակվել աշխատանքը, այնքան տեսա-
կան պիտի լինի հավելյալ բանվորական ժամա-
նակը»*:

Մասնակի դորժաղրկության ժամանակ բանվոր
գասակարգի դրության վերաբերմամբ կարև Մարքսն
ասում է.

«Կապիտալիստն այժմ կարող է բանվորի վղին
դնել վորոշ քանակությամբ հավելյալ աշխա-
տանք, առանց բանվորական ժամանակը հասցնե-
լու այն մակարդակին, վոր անհրաժեշտ է բան-
վորի դրությունը պահպանելու համար»:

Այսպիսով կատարելապես գործադրուրիների հիսուն
միլիոնանց բանակի դոյցության հետ միասին ամեն-
ուրեք տարածված է «մասնակի» դորժաղրկությունը,
վորն ավելի ևս վատթարացնում է բանվոր դապակարգի
դրությունը, իշեցնում և նրա կենսական մակարդակը:

ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ ՑԵՎ ՍՈՎ

Կարիքը դորժաղուրիների մեջ չափազանց մեծ է:
Հենց միայն այն հանդամանքը, վոր 77 յերկրներից
9-ում միայն դոյցություն ունի դորժաղուրիների պար-
տադիր ապահովագրում, ինչնին բավական պարզ ցույ-

* Կառպիտառ, հատ. I, էջ, 170, հրատ. 1928 թ.

ցանից և գործադուրկների դրության, գործադուրկների, վոր աշխատանքը կորցնելուց հետո թողնվում են նրանց բախտին... Սովոր մեռնել կամ զուրս դալ վորդություն խնդրելու— ահա թե ինչպիսի ընտրություն ե զնում գործադուրկը:

Բացի այս, գործադուրկն իր անդործության միջոցին պարտավոր և լինվ վճարել իր բնակարանի վարձնու կոմունալ սպասարկման ծախքները: Բնականորեն գործադուրկն սկսում ե նեղվել, բնակարանը փոխարինել ավելի եժանով, նույնիսկ մի մահճակարով միայն... Սակայն ժամանակի ընթացքում այդ ել չի ողոնում, ավելի եժան բնակարանի համար ել պետք և վճարել: Իսկ սրան հետեւում ե գործադուրկն բնակարանից զուրս նետելը: Գործադրկության յերկարատեղության հետ նվազում են ծախքերը վճարելու հնարավորություններն ու աճում են բնակարանից արտաքսելու գեղագերը:

Բնակարանից հետո դալիս ե սնունդը: Մենամենակ գործադուրկը քաղցած և մնում, բայց անհամեմատ ավելի դժվար և ընտանիքավոր գործադուրկի դրությունը, յերբ քաղցած և մնում ամրող ընտանիքը, նրանց թվում և յերեխաները, և այդ մի որ չե, յերկու որ չե... Առաջին ամիսները գործադուրկն ու իր ընտանիքն այսպես թե այնպես դեռ ունեն հաղուստ, վոտնաման, բայց ժամանակի ընթացքում մաշվում են դրանք:

Այս յերկրներում, ուր չկա սոցապահճովադրում, ուր պետք ե բժշկվել սիփական միջոցներով,—հիվանդ, սոված, սոտած և հաճախ նույնիսկ առանց վորևէ հովանու, առանց բնակարանի գործադուրկն իր ընտանիքով մատնվում և անխուսափելի մահվան: Այսպիսի

դայմաններում— յերեկիվա բանվորի, այսուրվա գործադուրկի աչքերն հարկավ բացվում են ու ականում, ծագուրկի դասակարգի շահերը պաշտպանում են վոր բանվոր դասակարգի շահերը:

Իսկ մնացած բոլոր սոցիալ-ռեմոկրատական Փաշխուսական կուսակցությունները միշտ գնացել ու զնում են բանվոր դասակարգի շահերի դեմ:

Գերմանիայում, Անգլիայում, Ավստրիայում ու մի շարք այլ յերկրներում գործադուրկներն ոգտվում են գործադրկության համար նպաստ ստանալու արտոնությամբ:

Բայց կապիտալիստները պետական առարանի ողոնությամբ ու ամեն գույնի ու տեսակի պրոֆրյուրուն կրատների հայտնի կամ զաղանի աշակցությամբ այդ ապհովագրումը կյանքում կիրառելիս միանդամայն աղավաղում են, այն ե՝ ա) կրծատում են գործադրուն կության համար տրվող նպաստի շափը, բ) սահմանափակում են այն անձանց թիվը, վորոնք իրավունք ունեն նպաստ ստանալու, ապահովագրվելու երավունքից ՎԵՐԿում են սեղոնային բանվորներին, կանանց, յերիսաւարդներին, գ) ապահովագրման ծախքերը բարձում են պրոլետարիատի ուսերին, դ) յերկարացնում են ապահովագրական ստամբ ու ժամկետը, վոր անհրաժեշտ և նպաստ ստանալու համար ու կրծատում նպաստանալու ժամկետը:

Կապիտալիստների արշավանքը գործադրկության ապահովագրության դեմ առանձնապես ուժեղացել և վերջին տարիս կապիտալիստներն իրենց այդ արշտավագրական ստամբ և ժամկետը, վոր անհրաժեշտ և վանքը բացատրում են նրանով, վոր անհրաժեշտ

Հրճատել ապահովագրության ծախքերը, վոր ավելացել են գործազրկության հսկայական աճման կազմակությամբ:

Այդպիսի արշավանք տեղի ունի Գերմանիայում, վորտեղ 1929 թվին հրատարակվեց ապահովագրության մասին նոր որենք իր լրացումներով, վոր ավելի ևռ վատթարացնում ե գործազրկների դրությունը:

Անդիմայում այդ արշավանքը տեղի ունի գործադուրկների նպաստի քանակի դեմ:

Ավատրիայում կազմված ե նոր որենքի նախադիմ, վորով գործազրկության ապահովագրությունն ավելի ևս վատթարացնում ե:

Ապահովագրական նպաստները, վոր վճարվում են գործադուրկներին, ինչնին չնշին են և բնակի բավական չեն գործադուրկին ու իր ընտանիքին մուրացկանությունից աղատելու համար: Մի քանի յերկրներում արհմիությունների անդամները գործազրկության ժամանակ նպաստ ստանում են նաև իրենց արհմիությունից, բայց այդ չնշին ողնությունը տրվում ե վորոշ ժամանակով միայն:

68 յերկրներում բոլորովին գոյություն չունի գործազրկության պարտադիր ապահովագրություն: Այդպիսի յերկրներից են՝ Հ. Ա. Միացյալ Նահանգները, Լատինական Սմերիկան, Յապոնիան, Բալկանյան յերկրները և այլն: Այդ յերկրներում գործազրկները վոշ մի նպաստ չեն ստանում: Նրանք ողտպում են մասնավոր մարդկանց բարեգործությամբ կամ իրենք պիտի նարեն իրենց համար սնունդ, վորտեղից կամենան:

Բաւրժուազիան շատ լավ գիտենալով գործազրկությամբ աղակցաւթյամբ ամեն ճիշտ թափառ է, վորպեսի գոր-

նակուրինների բաղմամիլիոն մասսաներն սկսագործելիքան վորոների մեջ մրցումը (կոնկուրենցիան) սրելու համար: Նրանք աշխատում են ողտագործել գործազրություններին վորպես շտրեյկբրեխների զործաշուլների ժամանակ, աշխատավարձը պահասեցնելու, բանվարական որը յերկարացնելու համար և այլն: Բաւրժուազիան աշխատում ե կազմալուծել աշխատող ու գործազրության վորոների միասնական Փրոնտը, սրել գործազրություններին աշխատողների զեմ և հենց գրանով թուլացնել իրեն թշնամի դասակարգային Փրոնտը:

Կապիտալիստական բոլոր յերկրներում գործադուրկները մատնված են սովի, ապրում են աղքատության մեջ, մեռնում են սովից կամ վերջ տալիս իրենց կյանքին ինքնասպանությամբ:

Սակայն սրա հետ միասին աճում ե գործազրությունների թիվը, վորոնք լցնում են գործազրկության, սովի ու ցրտի զեմ կովողների շարքերը, այսինքն նրանց շարքերը, վորոնք կովում են այն սիստեմի զեմ, վոր առաջնում ե այդ ամենը, այն ե՝ կապիտալիզմի զեմ:

Հ. Ա. ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ

Հ. Ա. Միացյալ Նահանգներում գործազրություններ կան վոչ պակաս 10 միլիոնից: Մամուլն ամեն որ հաղորդում ե զործից նորանոր արձակումների մասին: Վործազրկությունից պարտադիր սոցապահովագրում գոյություն չունի այնուղղ: Զափաղանց խրախուսվում և մասնավոր բարեգործությունն ու բարեգործական զանազան կրօնական համայնքների ու ընկերությունների գործունեյությունը, ինչպես որինակ՝ «Փրկության բանակ» և ուրիշների, վորոնց միջոցով գործազրություններին արվում ե մուլցիզիկն վայել փշրանքներ, ինչ-

պետ ոքինակի՞ն մի բաժակ սուրճ, մի աման սուլզ (առպուր) ու հաց կամ գիշերելու տեղ: Բայց, վորովհետև ուրիշ վո՛չ մի տեղից ոգնության հույս չկա, այդ չընա չին վողորդության համար ել տարվա ամեն տեսակ յեւ զանակին՝ ցրտին, շողին, անձրկին ու ցեխին հերթի ահապին պոշեր են կազմում ու ժամերով կանգնելուց հետո, շա՞տ շատերին վոչինչ չի հասնում: Գործադառութիւններին գուրս են նետում բնակարաններից բնակարանավարձ չվճարելու համար: Նրանք հարկադրված վիշերում են ծառուղիների նստարանների վրա: Դեպքեր են յեղել, յերբ գործադառութիւնները բանտի դռներն են թաշել ու պահանջել, վոր իրենց թույլ տան այնաեղ դիշերելու:

«Սառու Դեյլի Տրիբյուն» թերթն իր նոյեմբեր 17-ի (1930 թ.) համարում հողորդում ե այն աղքատության, սովոր ու ինքնասպանությունների մասին, վոր տարածված և բանվորների մեջ. «Սոված ընտանիքի թշվառությունն այնտեղ եր հասնել, վոր նրանք ստիպված յեղանիրենց տան մեջ ապրող չունն ուտել, քանի վոր յերեխաններին ուտելու այլևս վոչինչ չկար»:

Ֆրից Պատրիկը—Աշխատանքի ամերիկական ֆեդերացիայի Զիկագոյի բաժանմունքի նախադահը, Աղերի Լիգային կից Աշխատանքի բյուրոյում գործադուրների վրությունը բնորոշելիս ասաց, վոր

«Զիկագոյում տղամարդիկ, կանայք ու յերեխանները սուր կարիքի մեջ են: կանայք գերազանցում են սպանել իրենց յերեխաններին ու ինքնիրենց, քան տեսնել քաղցածությունից նրանց դանդաղ ու աստիճանական մահը: Տղամարդիկ ինքնասպանություն են զործում, վորովհետև դամիակ միջոցն ե, վոր մնում ե նրանց տրամադրության տակ: Բոկֆորդում, իլլինոյս շատ-

առում, Դ հոգուց բաղկացած մի ընտանիք քաղցածության այն աստիճանի հասավ, վոր մայրն իսրենց տան կատվից կերակուր պատրաստեց յերեխանների համար: Այս մասին հազորդվեց շատ թերթերում, ի միջի ալլոց և «Զիկագո Դեյլի Նյուս»-ում:

Քաղցից չմեռնելու ու անոթեան չմնալու համար դորժադուրկներն աշխատում են վորեւե հանցանքի համար բանտ ընկնել:

«Բոկֆորդում մի բանվոր դիտմամբ կոտրեց ցուցափեղվը (վիտրինան), յերբ դիառում եր նրան վոստիկանը: Նա հայտնեց, վոր ուղում ե բանտ ընկնել, վորովհետև վոչ գիշերելու աեղ ունի, վոչ ել ուտելու բան»:

Հարյուրավոր ու հազարավոր գործադուրկներ բանտ են ընկնում մանր գողությունների համար:

Հ. Ա. Միացյալ Նահանգներում դեռ գոյություն ունի թափառաշընկներին վերաբերյալ միջնադարյան որենքը, վորին ներկայիս յենթարկում են այն գործադուրկներին, վորոնք ոթեվան չունեն ու աշխատանք են վորոնում: Ձերբակալվածներին դատում են թափառաշընկության համար և դատարանի վճռով ուղարկում բանտ կամ հարկադրական աշխատանքի, պամավորապես ճանապարհների շինարարության վրա:

Հարավային Շտատներն հարկադրական աշխատանքների ուղարկվող գործադուրկներին ու նեղերերին շլթայում են միքանի հողու միասին ու այդ դրությամբ հարկադրում կատարել ամենածանր և աշխատանքներ:

Եւրբ այս զրության են գործադուրկները, կառավարությունը բավականանում ե լոկ խոստումներով, վոր մատիկ ապագայում աեղի պիտի ունենա «ծաղ-

Կում»։ Մասնակի ողնություն կառավարությունը ցույց ե տալիս մեծ մասամբ բանվոր դասակարդի վերին խավերին և առաջին հերթին «Հարյուր տոկոսանոց ամերիկացիներին»։

Այդ ոդնությունն արտահայտվում է հասարակական աշխատանքների զնելով, կրոնական ու բարեգործական կարմակերպությունների ու մասնավոր մարդկանց միջոցով զանազան վողորմություններ տալով և այն։ Առանձնապես ծանր դրության են ոտարերկրացի գործադրությունը, վորոնք վերջին ժամանակներու հարկադրած են ավելի հաճախակի զաղթել Հ. Ա. Միացաւ Նահանգներից։ Շատ հաճախ ել կառավարությունն ինքն և զաղթեցնում ոտարերկրացի գործադրություններին իրենց Հայրենիքը, առանձնապես Հեղափոխական հաղմակերպությունների մասնակիցներին ու գործադրկության գեմ ակտիվ կովողներին, թեև այդ արտաքավողներից շատերը տասնյակ տարիներով չեն յեղել իրենց հայրենիքում և այնտեղ վոչիք ու վոչինչ չունեն։ Կառավարությունը դրանով ուղում է աղատովել ոտարերկրացի և առաջին հերթին Հեղափոխականորեն տրամադրված գործադրություններից։ Եթե ծանր ե ամերիկացի ու ոտարերկրացի գործադրությունը դրանով ուղում է աղատովել ոտարերկրացի և առաջին հերթին Հեղափոխականորեն տրամադրված գործադրություններից։ Եթե ծանր ե ամերիկացի չամանակ ավելի աշխատանք ստանալու վո՞չ մի չույս չեն կարող ունենալ։ Ամեն տեղ նրանց արձակում են գործի առաջին հերթին ու նրանց տեղ ընդունում ապիտակների, վորոնց ստիպում են աշխատել այն պայմաններում, ինչ պայմաններում աշխատում ենին ներ-

ԳԵՐՄԱՆԻԱ

Գործադրությունների թիվը 5 միլիոն՝ մարդուց ավելի յէ։ Դրամանիացում գործություն ունի գործադրկության այարտադրական ապահովագրություն, և ապահովագրված բանվագրներն ողբակում են գործադրկության նպաստով 26 շաբաթ։ Նպաստի շաբաթ առաջանալու և շաբաթական 6-ից մինչև 21,60 մարկի մեջ։ Ըստանիքավորները, բացի այդ, ստանում են և լրացուցիչ նպաստ իրենց խնամատարության տակ գտնվողների համար յուրաքանչյ ւրին շաբաթական 0,60-ից մինչև 3 մարկ։ 16.738.000 ապահովագրվածների ընդհանուր թիվը 1930 թիվ գեկտեմբերին նպաստ ստացող գործադրությունները 1.700.000 հոգի ային։ Իսպի այդ, գործադրության առաջանակ ապահովներից մի մասը գործադրկության նպաստ են ստանում նաև արհմիություններից։ Այս տեսակ նպաստով պայմում ե գործադրությունների մի մասը միայն։

Մնացածներն ողնություն են ստանում աղքատախնամ, բարեգործական ընկերություններից կամ բոլոր ըսվին չեն ստանում։

Սոորեւ բերված պաշտոնական տվյալներից մենք կտեսնենք, վորոգործությունների թիվն ավելանալու հետ միասին, ավելանում և և նպաստ չստացողների թիվը։

Ամիսներ	Հործադրություններ ստանում ստացողներ		Նպաստ չը ստացողներ		Հաջողություն	
	1939թ.	1930թ.	1929թ.	1930թ.	1929թ.	
Ա. Վրիւ	.	1.951	810	1.394	2.081	557
Մ. Իիս	.	1.603	2.690	1.010	1.889	593
Հաւուիս	.	1.494	2.696	· · 0	1.845	564
Հ. Ամիս	.	466	2.819	861	1.901	602
Ուգուստոս	.	1.476	2.934	843	1.947	593
Սեպտեմբեր	.	1.527	8.167	9 0	1.975	617
						1092

* 1931 թ. գետրվարին 5.045.000 աշխատանք գնացաղներ։

Ապահովագրական պայմանների վատանակու հետ
մեանքով ապահովագրվողների թվից դուրս են գցվում
այն յերիտասարդները, վոր չեն լրացրել 17 տարին:
Դուրս են գցվում նաև այն բանվորներն ու բանվորուհիները,
վորոնք շաբաթական 30 ժամից պակաս են աշխատում
կամ ամսական 45 մարկից ավելի չեն վաստակում: Նպաստը
տրվում է աշխատանքի տևողականության
համեմատությամբ: Այդ նպաստն ստանալու համար
վերջին 18 ամիսների ընթացքում ապահովագրվածը
մինչեւ իր անցորդության առաջին ցուցակադրումը,
պետք է ունենա ապահովագրական ստագ և առնվազն
52 շաբաթ ծառայած լինի այնպիսի ձեռնարկության
մեջ, վորտեղ ապահովագրումը պարտադիր է: Յեթե
գործադրությունը համապատասխանում հարուցվող այս
բոլոր պահանջներին, նա ստանում է գործադրկության
նվազեցրած նպաստ: Այսպիսի պահանջներ դնել գոր-
ծադրությունը առաջ, — դա նշանակում է նախորոք զիտո-
նալ, վոր ինչպես կապիտալիստական ուսցիոնալացման
հետեւանքով, այնպես ել տնտեսական կրիզիսի պատճառ
ովզ Գերմանիայում տիրող գործադրկության ժամանակ
գործադրությունը մեծամասնությունն անկարող և ներ-
կայացնել տվյալներ տեսական աշխատանքի մասին: Դա
նշանակում է նախապես վորոշել, վոր գործադրությունը
կարելի յէ կողոպտել: Յեթե ընտանիքի յերկու անդամ-
ներ միաժամանակ գործադրությունը են, և յէրկուսն ել հան-
գիսանում են ընտանիքը կերակրողներ, ապա ընտանիք
կերակրողի ամենաշածք նպաստը կրծատվում է կիսով
չափ: Մյուս կողմից բարձրացագում են ապահովագրագարու-
ները: Մինչև 1929 թվի սեպտեմբերի Յ-ը գործադրությունը
ապահովագնաը եք առմես իր աշխատավարձի 3% -ը:

1930 թվի ոգոստոսի 1-ից նա վճարում է արդեն 4,5% -ը, իսկ ներկայիս խոսք կա արդեն բարձրացնելու այն մինչեւ
6,5% -ի: Գործադրությունը ապահովագրությունը վա-
տացնելով, կառավարությունը կամենում է ըստ կա-
րելույն մեծ չափերով կրծատել գործադրությունի ա-
պահովագրության վրա արած իր ծախքերը (1929 թվին
գործադրությունը ապահովագրությանը հատկացված եր
438,5 միլիոն, իսկ 1930 թվին 230 միլիոն մարկ, այսին-
քըն 208,5 միլիոն մարկով պակաս, այն ժամանակ, յերբ
գործադրությունն աճել է բուռն թափով) և միաժա-
մանակ գործադրությունը նյութական դրությունը վա-
տացնելով, նա կամենում է գործադրությունին դրեւ
մարտունակությունից, գարձնել ավելի քիչ վտանգա-
վոր:

Գերմանիայում գործադրությունն արտաքսում են
բնակարաններից, գործադրությունն բնակարան չեն տա-
լիս քրեւով: Յերբ զալիս են բնակարան վարձելու, առ-
աջին հարցը լինում է «աշխատանք ունե՞ք դուք»:

Թեեւ Գերմանիայում գոյություն ունի սոցապահո-
վագրում, սակայն գործադրությունը զգալի մասը մնում
է առանց գործեւ ողնության ու կրում և սոսկալի նեղու-
թյունները: Մամուլի մեջ հաճախ հաղորդում են լուրեք
գործադրությունը ու իբնոց լնտանիքների կարիք՝ ու
շաղցից գործած լնդասպանությունների մասին: Զե՞
վոր Գերմանիայում շա՞տ գործադրություն, մինչեւ իսկ
գործադրության համար նպաստ ստացողներ (մի
նպաստ, վորի քանակը կազմում է նրանց աշխատավար-
ձի մոտ 43—50 % -ը) արդեն կորցրել են նպաստ ստանա-
ծու բոլոր ժամկետները, գորովհետև մինչ այժմյան գոր-
ծադրությունը, վոր գլխավորապես հատեանք ետնտե-

սական կրիզիսի, գոյություն ուներ գարձյալ դործաղը՝ կություն, վոր առաջացել եր կապիտալիստական ռաժբոնալացման հետևանքով:

ԱՆԴԻԱԱ

Անդիայում ժողովրդական տնտեսության ստրուկտորայի փոփոխության և յերկարատև զեսպրեսիայի հետևանքով հետպատերազմյան շրջանում դործաղրկությունն ավելի տարածված ու մեծ եր իր չափերով, քան կապիտալիստական մյուս յերկրներում: Գործադրկությունն Անդիայում աճեց 1929—1930 թվականներին. Բեռ ուշ սկսված, սակայն արագ թափով կիրառվող կապիտալիստական ռաժբոնալացման հետեւանքով: Այդ պատճառով ել շատ բանվորներ, յերկար ժամանակ անշործ մնալով, կորցրել են արդեն ողնությունն ստանալու բոլոր հնարավորություններն ու մատնված են սովոր:

Անդիայում 1912 թվեց գոյություն ունի գործադրության պարտադիր ապահովագրված գործազուրկների թիվը 1929 թվի նոյեմբերին 1.439.000 մարդ եր, իսկ 1930 թվի նոյեմբերին արդեն հասնում եր 2.364.000 մարդու^ա, 1929 թվին գործազուրկների տոկոն ապահովագրվածն' ընթացքին հաշվով կազմում եր ամենը 10,5, իսկ 1930 թվին այդ տոկոսը հասավ 19,1-ի:

Ապահովագրության իրավունքից զրկած են՝ ա) այն յերկարաժամկետը, վորոնք չեն լրացրել 16 տարին, բ) Եօ տարեկանից բարձր անձինք, գ) այն աշխատավորանքը, վոր Փիզիկական աշխատանքով չեն պարապում:

* 1931 թ. տեղաբան ուշ թիվը հասնում է 2.797.000 մարդու:

տարեկան 250 ֆունտ սոներինդից ավելի յնկամուռ ունեն, դ) գյուղատնտեսական բանվորները և տնային ծառայողները, ե) յերկաթուղային ծառայողները և ուրիշները:

Բանվորները յուրաքանչյուր շաբաթ մուծում են ապահովագրար ըստ հասակի և ստանում զործադրկության նողաստը դարձյալ ըստ հասակի: Ստանալով հանդերձ զործադրկության նողաստ, վորն ապրուստի համար պաշտոնապես փորչված անհրաժեշտ գումարի մինիմումի կեսն անգամ չի կազմում (այդ պաշտոնական հաջ վարկումը կատարելիս հիմք և ընդունված 1907 թվի բարձրագույն հետագոտության տվյալները), գործադրության մատնվում և հաղցածության ու սովոր: Գործազուրկներից վոմանք, վորոնք արդեն սպառել են գործադրկության նողաստ ստանալու իրենց արտոնությունները կամ այդ նողաստը բոլորովին չստացողները, գործադրկության ժամանակ սգնություն են ստանում «Աղքատախնամ հողաբարձություններից»:

Բացի սրանցից կան և բազմաթիվ գործազուրկներ, վոր վո՛չ մի ոգնություն չեն ստանում:

Անդիայում նույնպես, ինչպես բոլոր յերկրներում, գործազուրկ բանվորին արտաքսում են բնակարանից, յերբ նա չի վճարում բնակարանավարձը:

Այսուղեղ նույնպես սովոր յեն մատնված ու անոթեան պուրակներում են զիշերում տարիվա ամեն տեսակ յեղանակներին ինչպես անդիացի, այնպես ել ամերիկացի, գերմանացի ու ամեն ազգի գործազուրկները:

Սակայն անդիական բուրժուազիային ու նրա հլուսնազնդ գործիք «բանվորական» կառավարությանը թվում եւ թե անդիական գործազուրկների գրությունը

զեռ շատ լավ է : Նրանք դռնում են, վոր այդ դրությունը պետք ե դեռ վատթարացնել : Այդ նստակով ել ի բրորիստների կտուավարությունը կաղմել ե մի «Թագավորական հանձնաժողով» , վորի պարտավորությունների մեջ մտնում ե վերանայել գործադուրիների ասպահովագրության որենքը , նախորոք նախատակ դնելով նվազեցնել այդ ասպահովագրության վրա գործադրովով պետական ծախքերը :

Պաշտոնական վիճակադրությունը ցուցակադրում ե միայն լրիվ գործադրություն , այն ել աշխատավորների վո՛չ բոլոր կատեգորիաներին : Ինկատի պետք ե ունենալ , վոր Անդրիայում կան աշխատավորների կատեգորիաներ (յերկաթուղային ծառայողներ , տնային ծառայողներ , գյուղատնտեսական բանվորներ և այլն) , վորոնք չեն մտնում այդ ասպահովագրության մեջ : Յեթե ինկատի առնենք և նրանց , վորոնք վո՞չ մի տեղ չեն ցուցակադրում , ապա գործադրությունը ընդհանուր թիվը կկազմի 4 միլիոն մարդ :

ԼԵՀԱՍՏԱՆ

Լեհաստանում լրիվ գործադրությունը թիվն արդյունաբերական արուեստարիատի շրջանում հաշվում ե 500.000 մարդուց ավելի : Յեթե դրան ավելացնենք գործադրությունը գյուղատնտեսական բանվորներին ու մյուս կառեղորիաներին , ապա Լեհաստանի գործադրությունը ընդհանուր թիվը կհասնի մինչեւ 1.200.000 մարդու : Պաշտոնական տվյալներով՝ լեհական բարեկարգության գործակազմը վաճառք ան միայն 229.333 գործադրություն : Այդ տվյալներն հարկավ չեն համապատասխանում իրականության , կաղմանը են գործադրությունը թիվը նվազեցնելու ձևով :

առևմով ե չեն ընդդրկում գործազուրկների մի շաբակատեղորիաներ :

Լեհաստանում գոյություն ունի գործազուրկների պարտադիր ապահովագրություն :

Գործազրկության նպաստ ստանում են միայն այն գործազրկությունը , վոր աշխատում են չորս զբաղված բանվորից ավելի աշխատավոր ունեցող ձեռնարկներում , իսկ զբանից պակաս բանվորներ ունեցող ձեռնարկներում աշխատող գործազրկությունը չի ստանում : Գործազրկության նպաստ ստանալու իրավունքից զըրկվում են այն գործազրկությունը , վորոնք գործազրկության նախընթաց տարվա ընթացքում 20 շաբաթից պաշտեն ոգտվում գյուղատնտեսական բանվորները և սեղողական աշխատել : Նպաստ ստանալու արտօնությունից նային աշխատավորները :

Գործազրկության նպաստ տրվում ե 13 շաբաթ միայն , իսկ գործազրկությունը խիստ տարածված վայրերում միայն նպաստը տրվում ե 18 շաբաթ : Ոգնություն ստացող գործազրկությունը թիվը չնչին ե : Վարչավայում ցուցակադրված 14000 գործազրկությունից նպաստ ստանում են 4000 հոգի միայն : Նպաստի չափն ել կազմում ե բանվորի աշխատավարձի 30-35 տոկոսը միայն : Կառավարությունը նախադում ե գործազրկության նպաստը նվազեցնել դարձյալ 10 տոկոսով :

ԱՎՍՏՐԻԱ

Գործադրությունը ընդհանուր թիվը հասնում է 550.000-ի : Ավստրիայում գոյություն ունի գործազրկության պարտադիր ապահովագրություն : Պաշտոնական տվյալների համաձայն 1930 թվի նոյեմբերի վեր-

ջերին Ավարիայում կային 237.745 գործազուրկ։ Գործազրկության համար նպաստ ստանում են վոչ բոլոր ցուցակադրվածները։ Բացի այս, պետք է հաշվի առնել և այն գործազուրկներին, վորչեն ցուցակադրված են իհարկե, գործազրկության վոչ մի նպաստ ել չեն ստանում։

1930 թվի նոյեմբերին գոյություն ունեցող սացապահովագրման որենքի մեջ մտցված են մի փոփոխություն, վորի համաձայն գործազուրկները դրկվում են նպաստից այն ժամանակ, յերբ «գործազրկությունը դեռ չի սպասում նրանց գոյությանը և նրանց դրությունը դեռ չի կարելի հրաւահատական համարել»։ Այսպիսի ձեվակերպումն անշուշտ գործազուրկներին ամբողջապես մտանում ե շինունիկների կամայականությանը, վորչունք նրանց պիտի դրկեն նպաստից յերբ կամենան։

Նպաստ ստանալու իրավունքով սպավում ե այն գործազրկը, վոր 12 ամսվա ընթացքում առնվազը 26 շաբաթ (փոփանակ նախակին 20 շաբաթվա) աշխատել և այնպիսի ձեռնարկության մեջ, վորտեղ սոցազահովաշնորհումը պարտադիր ե։ Որենքի յերոհիշյալ հավելման համաձայն գործազրկության համար նպաստ ստանալու իրավունքից զրկվում են. ա) անտառային բանվորները, բ) այն գործազուրկ յերիտասարդները, վորոնք չեն լրացրել 18 տարին, յեթե չունեն իրենց խնամքի տակ ուրիշներին, գ) բոլոր սեղոնային աշխատավորներն ու կառուցղները։ Գյուղատնտեսական բանվորների համար ապահովագրական ստաժը 52 շաբաթից բարձրացրել են 80 շաբաթվա, այսինքն այնպիսի մի չափի, վորչինքի ստաժ գործնականության համարավոր չի ունենալ։

Նպաստ ստանալու ժամկետը վորոշվում ե 13-ից շինցև 39 շաբաթ։ Առաջին հայացքից թվում ե, թե նպաստի ժամկետը նույնիսկ յերկարացրած ե, սակայն իսկապես հաղիվ ե պատահում, վոր գործազուրկներից վորեւ մեկը 13 շաբաթից ալիքի ուղարկի նպաստից, վորովհետու 39 շաբաթ նպաստ ստանալու համար պահանջվում ե 250 շաբաթվա անընդհատ աշխատանքի ստաժ այնպիսի ձեռնարկության մեջ, վորտեղ մտցված ե սոցազահովաշնորհ, այսինքն պահանջվում ե իսկապես հնդամյա ապահովագրական ստաժ։

21 տարեկանից ցածր գործազուրկներն ամենալավ դեմքում ստանում են նպաստ 13 շաբաթ։ Աղքատության համար տրվող նպաստը նվազեցվում է 75 տոկոսով գործազրկության նպաստի համեմատ։ Գործազուրկների ապահովաշնորհության որենքի նոր լրացման նախադումը մի կետ կու, վորի համաձայն գործազուրկները կարող են հարկադրական աքսորի յենթարկվել Ավտորիայից Յեփրովական այլ յերկրներ։ Նույն հավելումը նախատեսում ե, վոր գործազրկության նպաստ պիտի ստանան մինչև այժմ ստացողների կեսը միայն։ Սոցիալ-դեմոկրատները համաձայն են գործազրկության նորաստի այսպիսի կրծատումներին։ Գործազրկության սոսկալի լրության մասին Ավտորիայում Վիեննայի «Մոտե-ֆաւմն» իր 1931 թվի հունվարի 14-ի համարում գրում ե.

«3065 ինքնասպանության փորձ անողներից (վորոնցից 1447-ը տղամարդ են և 1618-ը կանայք) մեկ յերրորդ մասը մեռան։ Ինքնասպանության փորձերի հիմնական պատճառները, պաշտոնական վիճակադրության համաձայն, հանդիսանում են ընտառնեկան վեճերը։»

Այդ ընտանեկան վեճերի աստառը մեծ մասամբ նյութական դրությունն է : Այդ պատճառաբանություններն ելին հիմք հանդիսանում ինքն իրենց կյանքին վերջ տվաղների ու ինքնասպանության փորձ կատարողների համար : Սովոր ու կարիքը, վոր մասսայական բնույթին կրում ու պատճառ հանդիսանում այդքան ինքնասպանությունների, պարզ ցույց են առավազ գործազուրկների ու բանվոր զասակարդի դրությունն ամբողջապես : Ուժորմիստներին ու սոցիալ-ֆաշիստներին, վորոնք հավանություն են տալիս ու աջակցում բանվոր դասակարգի վրա առաջիկայում ել հարձակում գործելուն, նույնությունը քիչ և հետաքրքրում գործազուրկների սոսկալի դրությունը, ինչպես և կապիտալիստներին :

ՖՐԱՆՍԻԱ

Տնտեսական ճղնաժամը ֆրանսիայում տարածվեց մոտ ժամանակներս միայն : Գործազրկությունը նույնական սկսվեց բուռն թափով աճել վերջին ամիսներում միայն : Պաշտոնական վիճակաղբությունն այսուղ ել, ինչպես բոլոր կապիտալիստական յերկրներում, նվազեցնում և զործազուրկների թիվը : Եթիվ զործազուրկների թիվը 1930 թվի վերջերին հասնում էր 500000^{*} հազոր : Բացի գրանից, ֆրանսիայի համար չափազանց բնորոշ յերեկույթ և հանդիսանում մասնակի գործազրկության լայն տարածումը : Այդ զործազրկության չափերի ճիշտ վորոշումն անհնարին է : Մշակող արդյունաբերության գլխավոր ճյուղերի մեծամասնության մեջ ներկայիս տարածված ե մասնակի գործազրկությունը

* 1931 թ. մարտին, բայց այդ ֆրանսիայում կար կես մի մոսկովացարկություն

(առանձնապես մետաղագործական և տեքստիլ արդյունաբերության մեջ) : Բացի սրանցից, մասնակի գործազրկությունը տարածված է կաշվի արդյունաբերության, արհեստական մետաղաքարի, շինարարական, լեռնային արդյունաբերությունների մեջ և այլն : Մոտ ժամանակներս սկսված գործադրիկությունն արդեն տարածվել է ֆրանսիայի արդյունաբերության ճյուղերի մեծամասնության մեջ : Մասնակի գործազուրկների ընդհանուր թիվը, Աշխատանքի միջադաշտին բյուրոյի պաշտոնական տվյալների համաձայն, արդեն անցել ե մեկ միլիոնից : Փաստորեն նրանք, իհարկե, ավելի շատ են :

